ArmLur.am

ԾՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

I SSN 1829-2763

15 հուլիսի երեքշաբթի 2025
տպագրության ԺԳ տարի

95
(3126)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## «ԲԱՆԴԻՏՆԵՐԻ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՐԵՑ ԴԱՏԱԽԱԶԸ




ՀՀ Քննչական կոմիտեի եւ Գլխավոր դատախազության մասնագիտական բախումների արդյունքում հաղթել է դատախազը եւ կասեցրել գազագողությամբ զբաղվող բանդիտների գործունեությունը:

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է հետեւողականորեն լուսաբանել մեծամասշտաբ գողության դեպքը, որը դրսեւորվում է «Գազպրոմ Արմենիա» ընկերության կողմից մատակարարվող կապույտ վառելիքը գողանալու, կամ հաշվիչ չկիրառելու տեսքով:

Տեղեկացրել էինք, որ ՀՀ Քննչական կոմիտեի քննիչ Կ. Պապոյանի տրամադրած փաստաթղթով Քննչական կոմիտեն փաստացի կանաչ լույս էր վառել գազագողերի առջեւ, որոնք ավելի քան 20 օր իրավապահների աչքի առջեւ գողանում էին գազ եւ վաճառում մեկ տասնյակից ավելի գազալցակայաններում:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթի բացահայտումից հետո ՆԳ նախարար Արփինե Սարգսյանը այս տարվա հունվարի 17-ին նախաձեռնեց քրեական վարույթ, այն ուղարկեց ՀՀ քննչական կոմիտե, որտեղից պաշտոնապես հայտնեցին, որ «քննվում է մի շարք գազալցակայանների սեփականատեր Վ. Կ. (Վիլեն Կարապետյանի)-ի եւ մի խումբ անձանց կողմից առանձնապես խոշոր չափերով՝ 1 մլրդ 272 մլն 101 հզր 940 ՀՀ դրամի հարկեր չվճարելու նպատակով ընկերության հարկային հաշվարկներում խեղաթյուրված տվյալներ մտցնելու եղանակով հարկման օբյեկտը թաքցնելու, մասնավորապես՝ մեկ միասնական դիտավորությամբ հիշյալ ընկերությունների կողմից մատակարարվող եւ իրացվող բնական գազի հաշվառման սարքերի տվյալները ծրագրային միջամտություններով խեղաթյուրելու, նախապես հարմարեցված բեռնատար մեքենաներով գազի ապօրինի տեղափոխում իրականացնելու, կեղծ հաշվետվություններ կազմելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթը»:

Ըստ քննչական կոմիտեի՝ Վիլեն Կարապետյանի կողմից առանձնապես խոշոր չափերի հարկեր չվճարելու ապօրինի գործընթացն իրականացվել է նրան պատկանող 18 գազալցակայաններում, որի համար, Կոմիտեի նախագահի որոշումներով, վարույթներով ստեղծվել են քննչական խմբեր, որոնցում ընդգրկվել է 50 քննիչ:

***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***



Աժիշխանական խմբակցության պատգամավոր, առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանին էլի հետապնդում են սկանդալները: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ այս տարվա հունիսի սկզբին, երբ անհետ կորած զինծառայողների ծնողները դուրս են եկել վարչապետի հետ ունեցած հանդիպումից, բախում են ունեցել Արսեն Թորոսյանի հետ: Ծնողները, որոնք արդեն մի քանի տարի շարունակ բարձրաձայնում են իրենց զավակների ԴՆԹ նույնականացման հարցում առաջացած խայտառակություններից, այդ թվում՝ դեպքերից, երբ նույն ծնողին մի քանի անգամ տարբեր մարմնի մասեր են փոխանցվել՝ներառյալ «երեք ձեռք» ստանալու աղմկահարույց պատմությունը, Կառավարության մուտքի մոտ հանդիպել են «Մահվան նախարար» համարվող Արսեն Թորոսյանին: Ծնողների վրդովմունքը չի ուշացել. նրանք բարձրաձայն բողոքել են, գոռացել, իսկ ըստ ականատեսների՝նույնիսկ փորձել են քաշքշել նախկին նախարարին, որը ժամանակին համակարգում էր ԴՆԹ նույնականացումների գործընթացը: Ճիշտ է, օձիքից վեր չեն բարձրացրել, բայց տհաճ տեսարանն ակնհայտ էր: Ի պատասխան, երեկ՝ հուլիսի 13-ին, Արսեն Թորոսյանը հրապարակեց հատուկ պահպանվող տարածքի՝Կառավարության շենքի տեսախցիկների տեսագրությունից մի հատված՝պնդելով, թե իր նկատմամբ որեւէ հարձակում չի եղել եւ թիրախավորեց «Ժողովուրդ» օրաթերթին: Թե ինչ կերպով է Թորոսյանը, հանդիսանալով նախկինում վարչապետի աշխատակազմի ղեկավար, ձեռք բերել եւ հանրայնացրել հատուկ կարգավիճակ ունեցող տեսագրությունը, մնում է բաց հարց եւ իրավական գնահատականի արժանի՝կա՞ արդյոք այդտեղ պաշտոնական դիրքի չարաշահում: Սակայն հստակ է մեկ բան՝հենց այդ տեսանյութում ակնհայտ երեւում է, որ պատգամավորը ձգտում է փախչել բորբոքված ծնողներից՝անցնելով անվտանգության անցակետը:

***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***



Դեռ 2023 թվականին հայտնի դարձավ, որ Երասխում կկառուցվի 70 մլն ԱՄՆ դոլար ներդրմամբ հայ-ամերիկյան խոշոր մետալուրգիական գործարան: «Արտադրամասը տարեկան պետք է թողարկեր 180,000 տոննա արտադրանք»: Այս մասին գրել էր ՀՀ էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանը: Այս գրառումից հետո արտաքին ազդակների շնորհիվ շատ բան փոխվեց. նախ, սկսենք նրանից, որ գործարանն ադրբեջանական կողմի կրակոցների միջամտությամբ կառուցվեց ոչ թե Երասխում, այլ նույն թվականի տարեվերջի դեկտեմբերին հայտնի դարձավ, որ կկառուցվի Արարատի մարզի Արարատ գյուղում: Պաշտոնական հրապարակումներում, իհարկե, խոսվում է գեղեցիկ թվերի մասին. «Արտադրական հզորությունների ամբողջական գործարկման արդյունքում կստեղծվի մինչեւ 500 աշխատատեղ (առաջին փուլով մոտ 240): Գործարանը կունենա 200-250 մլն ԱՄՆ դոլարի տարեկան շրջանառություն: Առաջին փուլով նախատեսվում է կառուցել սեւ մետաղի ջարդոնի վերամշակման գործարան տարեկան 100-120 հազար տոննա արտադրողականությամբ, երկրորդ փուլով արտադրական ծավալները կկրկնապատկվեն եւ կկառուցվի նաեւ այլ մետաղական կոնստրուկցիաների եւ արտադրատեսակների գործարան (խողովակներ, տարբեր հատվածքի պրոֆիլներ, կոնտեյներներ եւ այլն): Սկզբնական անհրաժեշտ ներդրումը կազմում է մոտ 29,9 միլիոն ԱՄՆ դոլար, որը կստացվի կանոնադրական կապիտալում ներդրման եւ ֆինանսական հաստատություններից ստացված փոխառության միջոցով»,- ասված է նախագծի մեջ:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***



Շաբաթ օրը՝ հուլիսի 12-ին Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ ողջ քաղաքական էլիտան Գորիսում է եղել: Իշխանականները Գորիս են գնացել ուրբաթ երեկոյան, հավաքույթ կազմակերպել, միմյանց հետ զրույցներ, քննարկում են ունեցել, իսկ շաբաթ առավոտյան սկսել են ՔՊ քաղաքական ժողովը: «Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ փակ հանդիպման ընթացքում նախ օրակարգը ներկայացրել է Նիկոլ Փաշինյանը. 2026 թվականի խորհրդարանական ընտրություններ, սեպտեմբերի 20-ին կայանալիք ՔՊ վարչության ընտրություն, այնուհետեւ գրեթե բոլոր ՔՊ-ականները, միմյանց հերթ չտալով, ելույթներ են ունեցել ու հարցեր տվել Փաշինյանին՝ինչն ինչպես անել: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ ՔՊ-ականները ամեն բան արել են Նիկոլ Փաշինյանի աչքին բարձրանալու համար, որպեսզի ներառվեն 2026 թվականին կայանալիք խորհրդարանական ընտրությունների ընտրացուցակում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# «ԼԻԱՐԺԵՔ ԼՈՒԾՈՒՄԸ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ Է ԿԱԽՎԱԾ», ԲԵԳԼԱՐՅԱՆ

**Ի շարունակություն հուլիսի 12-ի հանրահավաքի եւ դրան հաջորդած նստացույցի՝ հուլիսի 14-ին՝ ժամը 10:30-ին, ՀՀ կառավարության շենքի դիմաց կազմակերպվել էր ակցիա՝ ներկայացնելու Արցախցիների իրավունքների պաշտպանության Խորհրդի պահանջները: Այս մասին տեղեկացնում է խորհուրդը:**



«Հորդորում ենք մեր բոլոր հայրենակիցներին ներկա գտնվել ակցիային եւ շարունակել պայքարը՝ հանուն մեր իրավունքների», - նշված է հայտարարության մեջ:

Հիշեցնենք, որ հուլիսի 12-ին Ազատության հրապարակում հանրահավաքի ավարտին հայտարարվեց նստացույց:

«Ժողովուրդ» օրաթերթը հուլիսի 13-ին եւս եղել է կառավարության շենքի դիմաց եւ զրուցել է Արցախի նախկին պետնախարար Արտակ Բեգլարյանի հետ:

**-Պարո՛ն Բեգլարյան, երեկ Դուք եւս մասնակցում էիք նստացույցին: Խնդրում ենք պատմել, թե ինչ տեղի ունեցավ. հատկապես նկատեցինք, որ իրավիճակը լարված էր, փոխոստիկանապետը սպառնաց, որ եթե 20 րոպեում չցրվեք, բոլորին բերման կենթարկեն: Ի՞նչ տեղի ունեցավ:**

-Այո՛, փոխոստիկանապետը սպառնաց, բայց չկարողացավ իր սպառնալիքը կյանքի կոչել: Մենք ժամեր շարունակ եղել ենք այստեղ, իսկ մյուս մասն Ազատության հրապարակում շարունակում էր նստացույցը: Բնականաբար, որեւէ ապօրինի քայլ չենք արել, իրացրել ենք մեր սահմանադրական իրավունքները: Կառավարության շենքի դիմաց էինք, քանի որ նստացույցն ու պայքարը շարունակական են, եւ ցանկացել ենք հստակ ցույց տալ, որ մեր պահանջների հասցեատերը հենց Կառավարությունն է: Միեւնույն ժամանակ պատրաստվում էինք այսօր կայանալիք ակցիային: Այդ մասին մեր ներկայացուցիչը հայտարարել էր նաեւ մամուլի միջոցով:

**-Պարո՛ն Բեգլարյան, Տարոն Չախոյանը դուրս է եկել իրավիճակին հետեւելու, ինչ-որ քննարկում սպասվո՞ւմ է նրա հետ:**

-Անձամբ ես նրա հետ քննարկելու որեւէ հարց չունեմ. Խորհրդի անունից չեմ կարող խոսել, քանի որ լիազորված չեմ: Բայց կարող եմ հստակ ասել՝ Տարոն Չախոյանը որոշում կայացնող անձ չէ, ընդամենը պրոպագանդիստ բարձրախոս է, երբեմն՝ նաեւ արցախցիների դեմ ատելության քարոզիչներից մեկը:

**-Պարո՛ն Բեգլարյան, մտավախություն չունե՞ք, որ կարող են Ձեզ խոչընդոտել կամ բերման ենթարկել, ինչպես, օրինակ, բերման են ենթարկել Արցախի Հանրապետության ԱԺ պատգամավոր Դավիթ Գալստյանին:**

-Ինքս անձամբ մտավախություն չունեմ: Եթե պայքարում ես, պետք է պատրաստ լինես նաեւ զրկանքների, այդ թվում՝ ազատազրկման: Այս իշխանությունների հետ հարաբերություններում ռիսկեր միշտ կան: Երեկ, օրինակ, փոխոստիկանապետը ապօրինի սպառնաց մեզ ձերբակալությամբ, բայց հանրային ճնշման եւ լրագրողների ներկայության պայմաններում խուսափեցին: Այդ պատճառով մեզ համար կարեւոր է, որ հանրային ուշադրությունն ու տեղեկատվական հոսքը պահպանվեն:

**-Ձեր պայքարը այս ձեւաչափով մինչեւ ե՞րբ եք շարունակելու:**

-Կշարունակենք տարբեր ձեւաչափերով՝ ըստ իրավիճակի: Դժվարանում եմ ժամկետ նշել, բայց վստահորեն կարող եմ ասել, որ Խորհուրդը շարունակելու է պայքարը արցախցիների իրավունքների պաշտպանության համար: Այս պահին առաջնային խնդիր է Հայաստանում արցախցիներին արժանապատիվ եւ կայուն կեցության ապահովումը: Բայց կան նաեւ խորքային հարցեր՝ գերիների ազատումը, Արցախի մշակութային ժառանգության եւ մասնավոր սեփականության պաշտպանությունը, եւ, ի վերջո, մեր վերադարձի իրավունքը:

**-Այդ ուղղությամբ ի՞նչ քայլեր են արվում: Արցախցի պաշտոնյաները պարբերաբար նշում են, որ Հայաստանի Կառավարությունը ոչինչ չի անում: Իսկ Արցախցիների Խորհրդի ներկայացուցիչները ի՞նչ քայլեր են ձեռնարկում՝ գուցե միջազգային հարթակներում:**

-Եթե նկատի ունեք Խորհուրդը, ապա այն դեռեւս չի հասցրել լիարժեք աշխատել միջազգային հարթակներում: Առանձին կառույցներ եւ անհատներ աշխատում են՝ ես՝ անձամբ եւ «Արցախ միություն» կազմակերպությունը նույնպես, բայց դրանք կցկտուր եւ հատվածական ջանքեր են: Մեր հիմնական խնդիրների լուծումը կախված է ՀՀ իշխանություններից: Իսկ նրանք ոչ միայն անգործություն են ցուցաբերում, այլ երբեմն նույնիսկ վնասում են մեր հավաքական իրավունքներին՝ ասես պաշտպանելով Ադրբեջան պետության շահերը:

*Հ. Գ. Նշենք, որ երեկ՝ երեկոյան, Արցախցիների իրավունքների պաշտպանության խորհուրդը հայտարարեց, որ որոշում են կայացրել այս փուլում դադարեցնել փողոցում տարվող պայքարը, նստացույցը՝ եւս: Նշվում էր, որ Արցախցիների իրավունքների պաշտպանության Խորհրդի կազմը վերակազմակերպվելու է. Խորհուրդն այլ ֆորմատով է գործելու:*

*Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

## ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՈՒԺԻ ՄԱՍԻՆ

Ռուսաստանաբնակ հայ գործարար, «Տաշիր» ընկերությունների խմբի հիմնադիր Սամվել Կարապետյանը հայտարարել է քաղաքական նոր ուժ ստեղծելու մասին:

Սամվել Կարապետյանի հայտարարությունը հրապարակել է նրա եղբորորդին՝ Նարեկ Կարապետյանը:

Սամվել Կարապետյանը հայտարարել է, որ ստեղծելու են սկզբունքորեն նոր քաղաքական ուժ:

Նա նշել է, որ մեծ հարգանքով է վերաբերվում այլ քաղաքական ուժերին ու գործիչներին: «Բայց մենք Հայաստանի համար լավ ապագա կառուցելու մեր պատկերացումն ունենք: Ու գնալու ենք մեր ճանապարհով, մեր նոր թիմով՝ չբացառելով ներքաղաքական համագործակցությունը համախոհների հետ: Փորձելու ենք համախմբել մեր ժողովրդին արդար ու մեծ նպատակների շուրջ», - հայտարարել է Կարապետյանը:

Նա նաեւ հավելել է, որ իրենց քաղաքական թիմի ձեւավորումը մեկնարկել է:

Հիշեցնենք, որ «Տաշիր» ընկերությունների խմբի հիմնադիր Սամվել Կարապետյանը 2 ամսով կալանավորվել է հունիսի 19-ին: Նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ սահմանադրությամբ չնախատեսված եղանակով իշխանությունը զավթելու հրապարակային կոչ հնչեցնելու հոդվածով:

## ԱՄՆ ԱՌԱՋԱՐԿԸ

ԱՄՆ-ն առաջարկել է ստանձնել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ նախատեսված տրանսպորտային միջանցքի վերահսկողությունը՝ երկու կովկասյան երկրների միջեւ երկար ժամանակ ձգձգված դիվանագիտական բանակցությունները առաջ մղելու նպատակով:

Այս մասին ճեպազրույցի ժամանակ հայտարարել է Թուրքիայում ԱՄՆ դեսպան Թոմ Բարաքը: Հայտնում է Middle East Eye-ը: Չնայած Հայաստանն ու Ադրբեջանը մարտին համաձայնության եկան խաղաղության համաձայնագրի նախագծի շուրջ, Բաքուն շարունակում է պնդել մի քանի լրացուցիչ պայմաններ՝ նախքան համաձայնագիրը պաշտոնապես ստորագրելը:

## ՄԻՊ-Ը ԸՆԴՈՒՆԵԼ Է ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Երեկ՝ հուլիսի 14-ին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պաշտպան Անահիտ Մանասյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Սլովակիայի Հանրապետության իրավունքների հանրային պաշտպան Ռոբերտ Դոբրովոդսկու գլխավորած պատվիրակության պաշտոնական ընդունելությունը:

Հանդիպմանը մասնակցել են նաեւ Սլովակիայի իրավունքների հանրային պաշտպանի եւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները:

ՄԻՊ Անահիտ Մանասյանը շնորհակալություն է հայտնել Ռոբերտ Դոբրովոդսկուն Հայաստան այցի համար, ներկայացրել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հիմնական գործառույթներն ու առաջնահերթությունները:

Պաշտպանը կարեւորել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնումն ու գործընկերության խորացումը: Այս համատեքստում քննարկվել են երկկողմ համագործակցության մի շարք առանցքային հարցեր՝ ներառյալ փոխայցերի կազմակերպման, փորձի փոխանակման եւ թեմատիկ ոլորտներում համատեղ նախաձեռնությունների իրականացման հնարավորությունները:

Իր հերթին Ռոբերտ Դոբրովոդսկին բարձր է գնահատել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեությունը եւ ընդգծել գործընկերային համագործակցությունը շարունակելու եւ զարգացնելու պատրաստակամությունը:

Հանդիպման ավարտին կողմերը վերահաստատել են իրենց պատրաստակամությունը՝ խորացնելու գործընկերային հարաբերությունները եւ ընդլայնելու համագործակցության շրջանակները՝ ի նպաստ մարդու իրավունքների պաշտպանության:

## ՋՕԸ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ ԵՆ

Երեկ տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության ջրօգտագործողների ընկերությունների եւ ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհրդի նիստը, որը վարել է ՀՀ ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը:

Նիստում որոշում է կայացվել դադարեցնել «Երեւան» ՋՕԸ տնօրենի լիազորությունները՝ անարդյունավետ կառավարում իրականացնելու պատճառով:

Նիստի ընթացքում քննարկվել են նաեւ ՋՕԸ-երի 2024 թվականի գործունեության տարեկան արդյունքները եւ 2025 թվականի ընթացիկ գործունեության վերաբերյալ հարցեր:

Քննարկվել են ՋՕԸ-երի կառավարումն ավելի արդյունավետ դարձնելու վերաբերյալ այլ հարցեր:

Նախարարը հանձնարարել է Ջրային կոմիտեի ղեկավարին ուսումնասիրություն իրականացնել ՋՕԸ-երում՝ 2020-2025 թվականների ընթացքում իրականացրած աշխատանքի վերաբերյալ:

## ՓԱՇԻՆՅԱՆՆ ՈՒ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

Բրյուսելում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսի հանդիպումը:

Վերջինս ողջունել է ՀՀ վարչապետի գլխավորած պատվիրակության այցը եւ կարեւորել Հայաստանի հետ հետեւողական ու արդյունավետ երկխոսությունը: Նա ուրախությամբ արձանագրել է, որ ավարտվել են ՀՀ-ԵՄ գործընկերության նոր օրակարգի շուրջ քննարկումները, իսկ փաստաթղթի ստորագրումը նախատեսվում է ԵՄ-ՀՀ հաջորդ գործընկերության խորհրդի նիստի շրջանակում: Մարթա Կոսը եւս մեկ անգամ հայտնել է ԵՄ ամուր աջակցությունը Հայաստանի բարեփոխումների հավակնոտ օրակարգին եւ ժողովրդավարական բարեփոխումների արդյունավետ իրականացմանը:

Վարչապետ Փաշինյանը նշել է, որ արդյունավետ հանդիպում է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահի եւ Եվրոպական հանձնաժողովի նախագահի հետ՝ հույս հայտնելով, որ ՀՀ-ԵՄ սերտ փոխգործակցությունը կշարունակի զարգանալ ու ամրապնդվել տարբեր ուղղություններով: ՀՀ վարչապետը կարեւորել է ԵՄ օժանդակությունը Հայաստանի տնտեսական դիվերսիֆիկացմանը, տրանսպորտի, ենթակառուցվածքների զարգացմանը, փոքր եւ միջին բիզնեսի կարողությունների ընդլայնմանը, ԵՄ ստանդարտների ներդրմանը եւ այլն:

Զրուցակիցները քննարկել են ԵՄ ֆինանսական գործիքակազմերով մեր երկրում իրականացվող ծրագրերին, տնտեսական գործընկերության խթանմանը վերաբերող հարցեր:

Անդրադարձ է կատարվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ ՀՀ Կառավարության կողմից իրականացվող ծրագրերին: Վարչապետ Փաշինյանը կարեւորել է միջազգային հանրության կողմից այս ուղղությամբ շարունակական աջակցությունը:

ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսը նշել է, որ առաջիկայում պատրաստվում է այցելել Հայաստան՝ ավելի առարկայական քննարկելու համատեղ ծրագրերն ու նախաձեռնությունները:

## ՌԴ–Ն ՍՊԱՍՈՒՄ Է ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻՆ

ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը հայտարարել է, որ Ռուսաստանը պատրաստ է Ուկրաինայի հետ բանակցությունների երրորդ փուլին եւ սպասում է Կիեւի առաջարկներին ժամկետների վերաբերյալ: Նրա խոսքով, Ուկրաինան չի շտապում բանակցությունների անցկացման հարցում:

Հիշեցնենք, որ երկրորդ փուլը կայացել էր հունիսի 2-ին Ստամբուլում, որտեղ կողմերը փոխանակվել էին փաստաթղթերով եւ պայմանավորվել գերիների փոխանակման մասին:

### ԱՅԼ ՖՈՐՄԱՏՈՎ ԿԱՇԽԱՏԵՆ

# ՓՈՂՈՑՈՒՄ ՏԱՐՎՈՂ ՊԱՅՔԱՐԸ ԴԱԴԱՐԵՑՎՈՒՄ Է

**Արցախցիների իրավունքների պաշտպանության խորհուրդը որոշել է այս փուլում փողոցում տարվող պայքարը դադարեցնել, նստացույցը՝ եւս:**




Այս մասին հայտարարել է Արցախցիների իրավունքների պաշտպանության Խորհրդի անդամ Ապրես Մարգարյանը:

Ապրես Մարգարյանը նշեց, որ Արցախի ներկայացուցչության շենքից Խորհուրդը դուրս կգա, գործընկերության վերաբերյալ էլ վերանայումներ կլինեն:

Բացի այդ, Խորհրդի անդամ Մարգարյանը նշեց, որ Արցախցիների իրավունքների պաշտպանության Խորհրդի կազմը եւս վերակազմակերպելու են, այլ ֆորմատով են աշխատելու:

Մարգարյանը պատմեց, թե Կառավարությունից ակնարկում են՝ քանի որ արցախցիները քիչ են մասնակցել հավաքին, ուրեմն իրենց հարցերը լուծել են. «Բայց իրականում խնդիրն այն էր, որ արցախահայությունը հավատ չունի, եւ հիասթափվածությունն է պատճառը:

Երբ լինի հանրային աջակցություն՝ մենք պատրաստ ենք կրկին առաջնորդել, բայց այս պահին համահայկական օրակարգը ոչ բոլորն ընդունեցին», - ասաց Ապրես Մարգարյանը:

Տեղեկացնենք, որ Արցախցիների իրավունքների պաշտպանության Խորհրդի կողմից ձեռնարկած գործողությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության Կառավարությունը որոշակի փոփոխություններ է իրականացրել բռնի տեղահանված արցախցիներին հատկացվող բնակապահովման ծրագրի վերաբերյալ:

Կատարված փոփոխությունները Խորհրդի կողմից ստեղծված մասնագիտական խմբերի տարած աշխատանքների հաջողություններն են:

Կառավարությունը խոստացել էր բռնի տեղահանված արցախցիների սոցիալական խնդիրների լուծման հստակ որոշում ընդունել: Ըստ որի՝ բռնի տեղահանված արցախցիներին պետք է Կառավարությունը տրամադրեր սոցիալական աջակցություն մինչեւ բնակապահովումը:

Կառավարության հետ տարված աշխատանքների եւ Արցախցիների իրավունքների պաշտպանության Խորհրդի հետագա քայլերի մասին բռնի տեղահանված արցախցիների իրազեկելու նպատակով ԱԻՊ Խորհուրդը հայտարարել էր հանրահավաք:

Հիշեցնենք, որ հուլիսի տասներկուսին արցախահայությունը իրականացրել էր հանրահավաք եւ նստացույց:

Հանրահավաքը նախաձեռնել էին Արցախցիների իրավունքների պաշտպանության Խորհուրդը, որն էլ այս ամբողջ ժամանակահատվածում զբաղվել է արցախահայության հավաքական վերադարձի, սոցիալական եւ այլ խնդիրների բարձրաձայնման ու լուծման հարցերով:

Հիշեցնենք, որ Արցախցիների իրավունքների պաշտպանության Խորհուրդը Հայաստանի Հանրապետության Կառավարությանը ներկայացրել էր 12 կետից բաղկացած պահանջագիր, որոնցից են՝

արցախահայության հավաքական վերադարձը Արցախ,

Բաքվում պահող հայ պատանդների անհապաղ վերադարձի ապահովումը,

Արցախի նյութական մշակույթի պահպանման ապահովումը,

բռնի տեղահանված արցախցիների սոցիալական աջակցության տրամադրումն այնքան ժամանակ քանի դեռ նրանք չեն ապահովվել բնակարանով:

*ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ*

### ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## 2,2 ՄԼՆ ԴՈԼԱՐ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՄԲ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը ոստիկանական նոր մեքենաներ է գնել ոստիկանության համար:

869 մլն 250 հազար դրամ էլեկտրոնային աճուրդով ներքին գործերի նախարարությունը 57 մեքենա է գնել: Վերոնշյալ գումարը համարժեք է գրեթե 2 մլն 267 հազար դոլարի:

Մեքենաները ՆԳՆ-ն գնել է «Մուրան» ՍՊԸ-ից, որը Հայաստանում խոշոր ավտոներկրող ընկերություն է: Պայմանագիրը կնքվել է 2025 թվականի հունիսին:

Մեքենաների համար նախարարությունը ներկայացրել է հետեւյալ տեխնիկական բնութագիրը. «Բացառապես էլեկտրական, 0-ից 100 կմ/ժ արագացում՝ ոչ ավելի, քան 8 վայրկյանում:

Պիկային հզորությունը՝ ոչ պակաս 180 կՎտ/ժ:

«Սեդան», գույնը՝ սեւ (գործարանային), 4 դուռ, նստատեղերի քանակը՝ 5, առջեւի կամ հետեւի տանող, կամ լիաքարշ:

Սրահի նստատեղերի պաստառը կտոր կամ կաշեպատ, գույնը՝ սեւ կամ մուգ երանգներ, օդորակիչ, տաքացնող համակարգ, գործարանային աուդիո համակարգ առնվազն 4 բարձրախոսով, առնվազն հետեւի տեսախցիկ, կողային դռների բոլոր 4 ապակիները էլեկտրակառավարվող, կենտրոնական փական համակարգով, սրահի առջեւի եւ հետեւի ռետինե գորգերով:

Մեքենայի սրահում պետք է լինի առնվազն 6 անվտանգության բարձիկ, սրահի յուրաքանչյուր նստատեղ ունենա իր առանձին ամրագոտին, հեռակառավարվող կենտրոնական փականը, ESP եւ ABS (արգելակման ապաբլոկավորման) համակարգերը, LED լուսարձակները, էլեկտրակառավարվող կողային հայելիները:

Մատակարարը պետք է ունենա ավտոպահեստամասերի (ընթացային, թափքի մասի պահեստամասեր) պահեստ կամ խանութ, վերանորոգման համար անհրաժեշտ բոլոր արտադրամասերը (մարտկոցների, ընթացամասի, էլեկտրականության, անվաբացքի կարգավորման, վուլկանացման, ղեկային մասի, փոխանցման տուփի, մեքենայի ախտորոշման եւ այլ անհրաժեշտ սարքավորումներ եւ ծառայություններ, ինչպես նաեւ զոդման եւ թափքի ներկման աշխատանքներ իրականացնելու հնարավորություն)», - նշված է ՆԳՆ տեխնիկական բնութագրում:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ՝ ՍԱՐՅԱՆ, ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ

Երեւանի քաղաքապետարանից հայտնում են, որ Սարյան եւ Մոսկովյան փողոցներում երթեւեկությունը կդառնա միակողմանի:

«Գիտենք՝ Սարյան փողոցը ինչպիսի նշանակություն ունի, ինչպիսի հոսք կա այդտեղ:

Այս փոփոխության արդյունքում կունենանք եւս մեկ երթեւեկելի գոտի, որը ընդհանուր տրանսպորտային հոսքերի անընդհատություն կապահովի», - ասել է տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը:

Սարյան փողոցում կսահմանվի միակողմանի երթեւեկություն. սկիզբ կառնի Մաշտոցի պողոտայից Բաղրամյան պողոտա ուղղությամբ՝ ընդգրկելով Սարյան փողոցը, ինչպես նաեւ Մոսկովյան փողոցի մի հատվածը:

Ամիրյան-Արամի-Պուշկին-Թումանյան փողոցից դեպի Սարյան հնարավոր կլինի երթեւեկել միայն աջ՝ դեպի Բաղրամյան պողոտա ուղղությամբ, իսկ Լեո եւ Ֆրիկի փողոցներից՝ միայն ձախ՝ դեպի Բաղրամյան պողոտա ուղղությամբ:

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ

# ԿՐԿՆԱԿԻ ՑԱԾՐ ՏՈՒՐՔ՝ ԹՎԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԴԵՊՔՈՒՄ

**Վերջերս Ազգային ժողովն արտահերթ նիստերի ընթացքում հաստատեց «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին օրենսդրական փաթեթը, որով նախատեսվում է օրինական կարգավիճակ տալ թվային վարորդական վկայականներին եւ հաշվառման վկայագրերին, ինչպես նաեւ նվազեցնել դրանց տրամադրման տուրքերը:**




Այսպիսով՝ 2025 թվականից հետո այն անձինք, որոնք առաջին անգամ կդիմեն վարորդական կամ հաշվառման վկայական ստանալու համար եւ կընտրեն միայն թվային տարբերակը՝ հրաժարվելով պլաստիկ քարտից, կվճարեն կրկնակի ցածր տուրք:

Օրինակ, ըստ սահմանված կարգի, վարորդական վկայական ստանալու համար վճարելու ստանդարտ տուրքերն այսօր կազմում է 12 հազար դրամ՝ վարորդական վկայականի, եւ 6000 դրամ՝ հաշվառման վկայագրի համար: Թվային տարբերակի դեպքում տուրքի այս չափը կնվազի՝ համապատասխանաբար դառնալով 6000 եւ 3000 դրամ:

Օրենքի այս փաթեթը սահմանում է նաեւ, որ նախագծով ձեւավորվում է լիազորող նորմ, որը կթույլատրի համարանիշերի եւ հաշվառման վկայագրերի առաքումն իրականացնել փոստային ճանապարհով: Սա հատկապես նպատակահարմար կլինի առցանց առուվաճառքի, գրավի կամ լիզինգի իրավունքի գրանցման դեպքերում: Այս մասին հայտնել էր նաեւ ՆԳ նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանը:

Այսինքն, եթե մեքենայի առուվաճառքը կատարվի օնլայն տիրույթում, եւ պետհամարանիշերը չփոխվեն, ապա դրանք եւ հաշվառման վկայագիրը հնարավոր կլինի ստանալ փոստով՝ առանց գրասենյակ այցելելու անհրաժեշտության:

Մասնավորապես օրենքը սահմանում է. «ՀՀ կառավարության՝ գործընթացների թվայնացման ծրագրի շրջանակներում տրանսպորտային միջոցների պետական գրանցումը-հաշվառումը ամբողջապես թվայնացնելու եւ անձի՝ ՀՀ ՆԳՆ լիազոր մարմին այդ նպատակով այցելելու անհրաժեշտությունը բացառելու համար նախատեսել պետական տուրք տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերի եւ հաշվառման վկայագրերի առաքման համար՝ արժեքի մասով հիմք ընդունելով այն, որ համարանիշերի քաշը կազմում է մոտ 480 գրամ, որի պատվիրված ծանրոցային առաքման արժեքն է մոտ 2000 ՀՀ դրամ՝ ըստ փոստային հաշվիչի (https://www.haypost.am/am/postal-calculator), իսկ առաքման համար ծառայության մատուցման համադրմամբ այդ ծառայության համար նախատեսել 5000 ՀՀ դրամի չափով տուրք»: Այս նախագծով սահմանվում է նաեւ վարորդական իրավունքի վկայական ստանալու տեսական եւ (կամ) գործնական քննություններին արտահերթ մասնակցելու համար պետական տուրք՝ 45.000-30.000 ՀՀ դրամի սահմաններում՝ պայմանավորված այն օրվա ընտրությամբ, երբ վարորդի թեկնածուն կնախընտրի հանձնել այդ քննությունը:

Սույն օրենքն ուժի մեջ կմտնի 2025 թվականի սեպտեմբերի 1-ից:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ԻՐԱՎԻՃԱԿ

## ԿԵՂԾԻՔՆԵՐ՝ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Սայադ Սամվելի Սմբատյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, զբաղեցնելով ՀՀ ՊՆ N զորամասի թիկունքի պետ-հրամանատարի թիկունքի եւ կոմունալ-շահագործման գծով տեղակալի պաշտոնը, եւ հանդիսանալով պաշտոնատար անձ, ՀՀ ՊՆ N զորամասի կադրերի բաժանմունքի սպայական, ենթասպայական եւ շարքային կազմերի պայմանագրային զինծառայողների ատեստավորման գործընթացը համակարգող խմբի պետ, պաշտոնատար անձ հանդիսացող Հակոբ Խորենի Խոշբեկյանի հետ, նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, կատարել է պաշտոնեական կեղծիք:

Հակոբ Խորենի Խոշբեկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ՀՀ պաշտպանության նախարարի՝ 2024 թվականի ապրիլի 12-ի թիվ 611 հրամանի համաձայն, ընդգրկված լինելով ՀՀ ՊՆ Ն զորամասում ատեստավորումն անցկացնող թիվ N 9 ատեստավորման հանձնաժողովում եւ հանդիսանալով պաշտոնատար անձ, ՀՀ ՊՆ թիվ Ն զորամասի թիկունքի պետ-հրամանատարի թիկունքի եւ կոմունալ-շահագործման գծով տեղակալ, պաշտոնատար անձ հանդիսացող Սայադ Սամվելի Սմբատյանի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում կատարել է պաշտոնեական կեղծիք:

## ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Իրավապահ մարմինները շարունակում են բացահայտել վարժական հավաքներից խուսափելու դեպքերը: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ պարզվել է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի բնակավայրերից մեկի վարչական ղեկավարը, 2025 թվականի մարտի 18-ից ապրիլի 11-ը ՀՀ ՊՆ կողմից կազմակերպվող 25-օրյա վարժական հավաքներից իր ազգականին ազատելու դիտավորությամբ, նշված ժամանակահատվածում վերջինիս՝ ՀՀ-ում գտնվելու պայմաններում, 2025 թվականի փետրվարի 11-ի թվագրմամբ ստորագրել եւ իր կնիքով հաստատել է կեղծ բովանդակությամբ տեղեկանք այն մասին, թե իբր նշված անձը բնակվում է Ռուսաստանի Դաշնությունում: Այնուհետեւ վարչական ղեկավարը հիշյալ տեղեկանքը տրամադրել է ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսարիատի աշխատակցին՝ այն դնելով պաշտոնական շրջանառության մեջ, որի արդյունքում ՀՀ զինապարտ քաղաքացին ազատվել է վարժական հավաքին մասնակցելուց: Այս մասին հայտնում են հակակոռուպցիոն կոմիտեից:

Բացի այդ, նախաքննությամբ պարզվել է, որ հիշյալ վարչական ղեկավարը ստորագրել եւ Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսարիատ է տրամադրել 2025 թվականի փետրվարի 11-ի թվագրմամբ կազմված եւս մեկ կեղծ տեղեկանք ՀՀ զինապարտ քաղաքացու համար՝ դարձյալ նշելով, որ վերջինս, իբր, բնակվում է Ռուսաստանի Դաշնությունում, որի արդյունքում նշված անձը նույնպես չի մասնակցել 25-օրյա վարժական հավաքին:

Վերը նշված հանցավոր արարքների կատարման համար վարչական ղեկավարին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ): Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

Վարչական ղեկավարի կողմից 2025 թվականի փետրվարի 11-ին տրամադրված տեղեկանքների հիմքով վերը նշված երկու անձինք չեն մասնակցել 2025 թվականի մարտի 18-ից ապրիլի 11-ը ՀՀ ՊՆ կողմից կազմակերպվող 25-օրյա վարժական հավաքներին, որի փաստով ՀՀ քրեական օրենսգրքի 462-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ) եւ 46-462-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ) նախաձեռնվել է քրեական վարույթ եւ ուղարկվել ըստ քննչական ենթակայության:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

## ԳԱԶԱԼՑԱԿԱՅԱՆՈՒՄ ԼՎԱՑՎԵԼ ԵՆ ԱՐՅԱՆ ՀԵՏՔԵՐ

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Արմավիրի մարզում գործող գազալցակայանում տեղի ունեցած սպանության դեպքից հետո գազալցակայանի 2 աշխատակից կատարել է հանցագործությունների պարտակում:

Մասնավորապես, մարզում գործող գազալցակայանի հերթափոխի պետը, սպանություն կատարած անձի բացահայտմանը խոչընդոտելու նպատակով, գազալիցքավորողին հրահանգել է ջրով լվանալ գազալցակայանի տարածքում թափված արյան հետքերը, հավաքել եւ զուգարանակոնքը նետել կրակոցների արդյունքում տարածքում թափված կրակված պարկուճները, այնուհետեւ կրկին լվանալ արյան հետքերը՝ այդ կերպ կազմակերպելով եւ ղեկավարելով գազալիցքավորողի կողմից Կ.Բ.-ի կատարած հանցագործությունների պարտակումը:

Գազալցակայանի հերթափոխի պետի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ քրեական օրենսգրքի 46-474-րդ հոդվածի 1-ին մասով (հանցանք կատարած անձին աջակցելը կազմակերպելը) եւ գազալիցքավորողի նկատմամբ՝ 474-րդ հոդվածի 1-ին մասով (հանցանք կատարած անձին աջակցելը):

## ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՎԱՐՈՐԴԸ

Հեղաշրջման պլանի քրեական վարույթի շրջանակներում կալանավորվել է ԱԺ պատգամավոր Արթուր Սարգսյանի վարորդը:

Ինչպես հայտնի է, ՀՀ քննչական կոմիտեն հայտնել էր, որ «Սրբազան պայքար»-ի մասնակիցները եւ ղեկավարները պլանավորել են ՀՀ-ում ահաբեկչական գործողություններ: Պլանավորմանը մասնակցել են մի շարք անձինք, ներգրավվել են նախկին ոստիկաններ ու զինվորականներ: ՔԿ-ն նաեւ մի շարք ձայնագրություններ է հրապարակել:

Արդյունքում, պաշտպանական կողմը պնդում է, որ ձայնագրությունը ամբողջական չէ եւ կոնտեքստից կտրված է: Եվ ահա, այս քրեական վարույթի շրջանակում կալանավորվեցին Բագրատ Սրբազանը, ԱԺ պատգամավոր Արթուր Սարգսյանը եւ 10-ից ավելի անձ:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ քրեական վարույթի շրջանակում կալանավորվել է նաեւ ԱԺ պատգամավոր Արթուր Սարգսյանի ընտանիքի վարորդը, որին նախաքննական մարմինը 50-ից ավելի գործողությունների համար է մեղադրում:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ կալանավորված վարորդը Կարո Օկումուշյանն է, որը իրավապահներին ասել է, որ իր նկատմամբ քաղաքական հետապնդում է իրականացվում, եւ ինքը չի ընդունում առաջադրված մեղադրանքը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 11-ից 14-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 221 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ԴՊՐՈՑԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Մի քանի օր է, ինչ սկսել են Նոյեմբերյանի հիմնական դպրոցի եռահարկ շենքը քանդել. հանել են շենքի տանիքի տախտակները, որոնք լավ վիճակում են, եւ 3-րդ հարկի եվրոպատուհանները: Հավանաբար դպրոցի նոր շենքը քանդվելիք դպրոցի տեղում են կառուցելու: Այս տարի Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք արել «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում Տավուշի մարզում կառուցվող, հիմնանորոգվող դպրոցների մասին: Մարզպետարանից ստացված պատասխանի մեջ, ի թիվս այլ դպրոցների, նշված է. «Նոյեմբերյանի միջնակարգ դպրոց-նախագծման փուլ»: Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոցի շենքը շահագործման է հանձնվել 1962 թվականին, դպրոցի մարզադահլիճը եւ մեծ դահլիճը 1982 թվականին հիմնանորոգվել են, դրանից հետո շենքի տանիքը, պատուհանները փոխարինվել են նորերով, դասասենյակները եւս բազմիցս ընթացիկ նորոգման են ենթարկվել: Որքանով տեղյակ ենք՝ դպրոցի շենքը վթարային չէ: Նոյեմբերյան քաղաքի բնակիչներից ոմանք այն կարծիքին են, որ պետք չէր շենքը քանդել, այն որպես կեցավայր կարելի էր տրամադրել Նոյեմբերյան քաղաքում վարձով ապրող, Արցախից բռնագաղթած ընտանիքներին: Հուլիսի 7-ին տեղեկատվական հարցում ենք արել մարզպետ Հ. Ղալումյանին՝ նրանից հարցնելով. «Որքա՞ն է Նոյեմբերյանի հիմնական դպրոցին պատկանող հողատարածքը, դպրոցի նոր շենքը որտե՞ղ է կառուցվելու, դպրոցի ներկայիս շենքը քանդվելո՞ւ է, ե՞րբ է սկսվելու, ավարտվելու նոր շենքի շինարարությունը, գալիք ուսումնական տարում որտե՞ղ են կայանալու դասերը»: «Տեղեկատվության մասին» օրենքով սահմանված տեղեկատվական հարցմանը պատասխանելու համար 5-օրյա ժամկետը լրացել է, սակայն մարզպետը դեռ հարցմանը չի պատասխանել:

Հանրային քննարկում Դիլիջանի համայնքապետարանը հայտնում է, որ հուլիսի 16-ին՝ ժամը 14:00-ին, Դիլիջանի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի կունենա Դիլիջան-Սեւան նոր թունելի կառուցման աշխատանքների՝ բնապահպանական եւ սոցիալական հարցերի վերաբերյալ հանրային քննարկում: Շինարարական ոչ բարդ շատ ծրագրեր ձախողած իշխանությունը ե՞րբ, ինչպե՞ս է իրականացնելու համեմատաբար բարդ կառույց հանդիսացող թունելի շինարարությունը:

## ՊՆ–Ն ՈՉԻՆՉ ՉԻ ԱՍՈՒՄ

Հուլիսի 2-ին պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին մեր թղթակիցը դիմել է հարցմամբ. Ադրբեջանի հետ սահմանազատման գործընթացի հաջորդ փուլը ե՞րբ է անցկացվելու, սահմանի ո՞ր հատվածում: Պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «Հարցի առնչությամբ հայտնում ենք, որ տրված պաշտոնական հայտարարություններից եւ հրապարակումներից զատ որեւէ հավելյալ տեղեկություն չենք կարող հաղորդել»:

*ՌՈՒԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ»

Գ.

# ԲԱՆԿԸ՝ «Tech Week Vanadzor 2025» ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ

**Այս տարվա հուլիս 4-ից 6-ը Վանաձորում անցկացվեց «Tech Week Vanadzor 2025»-ը: «Արդշինբանկը», հավատարիմ մնալով նորարար մոտեցումների իր ռազմավարությանը, մասնակցեց միջոցառմանը:**




Tech Week տեխնոլոգիական միջոցառումների շարքն ամեն տարի միավորում է հայկական խոշոր ՏՏ կազմակերպությունները Երեւանից հեռու՝ Հայաստանի որեւէ քաղաքում, որպեսզի տեղի երիտասարդները հնարավորություն ունենան բացահայտելու իրենց թվային ամբողջ ներուժը: Tech Week-ն այս տարի կանգ առավ Վանաձորում՝ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում: Tech Week-ի նպատակն է խթանել մարզերում տեխնոլոգիական կրթությունը, ներկայացնել ոլորտի վերջին ձեռքբերումները եւ ստեղծել համագործակցության նոր հնարավորություններ:

Միջոցառումը հագեցած էր ոլորտի տարբեր ներկայացուցիչների ելույթներով, թեմատիկ պանելային քննարկումներով՝ նպատակ ունենալով ապացուցել, որ տեխնոլոգիական ապագան ոչ թե Երեւանում է, այլ ամբողջ Հայաստանում:

«Արդշինբանկը» եւս Վանաձորում էր, բանկի թվային բանկինգի զարգացման վարչության ղեկավար Նարեկ Գրիգորյանը մասնակցեց «Ու՞ր ենք գնում. տեխնոլոգիաները, մարդիկ ու ապագան, որ միասին ենք կառուցում» խորագրով պանելային քննարկմանը, որտեղ բարձրացվեցին տեխնոլոգիական առաջընթացի, մարդկային ներուժի եւ ֆինանսական ոլորտի ապագայի հիմնախնդիրներն ու հնարավորությունները:

«Ապագան թվային է, բայց այն չի կարող կառուցվել առանց մարդկանց: Տեխնոլոգիաներն արժեքավոր են միայն այն դեպքում, երբ ծառայում են մարդկային կարիքներին եւ վերափոխում փորձառությունը: Այս առումով «Արդշինբանկում» մենք ձգտում ենք հավասարակշռել նորարարությունը եւ հումանիզմը՝ ներդնելով արդյունավետ ՏՏ լուծումներ՝ մեր հաճախորդների կյանքի որակը բարձրացնելու համար», - նշեց Նարեկ Գրիգորյանը:

Tech Week հարթակը հնարավորություն է ստեղծում, որպեսզի բիզնեսը, կրթական միջավայրը եւ ՏՏ մասնագետները համախմբվեն ու համատեղ նախաձեռնություններով նպաստեն ոլորտի առաջընթացին: «Արդշինբանկի» ներգրավվածությունը հենց այդ համադրության կարեւորության վկայությունն է՝ «Կառուցում ենք միասին» սկզբունքով. թվայնացումը բանկային ոլորտում այլեւս ընտրություն չէ, այլ անխուսափելի եւ համակարգային մոտեցում:

***«Արդշինբանկի» մասին***

«Արդշինբանկը» Հայաստանի առաջատար բանկն է: Այն մատուցում է բազմաբնույթ ունիվերսալ բանկային ծառայություններ՝ տրամադրելով լուծումներ մանրածախ, կորպորատիվ, ներդրումային, ինչպես նաեւ փրայվիթ բանկինգի ու ակտիվների կառավարման ոլորտներում: «Արդշինբանկը» սպասարկում է ավելի քան 410,000 հաճախորդի՝ 2,200-ից ավելի աշխատակիցների աջակցությամբ: Բանկում ներդրված է ծառայությունների մատուցման ու վաճառքի հզոր բազմախողովակ պլատֆորմ՝ 71 մասնաճյուղերով, համապարփակ մոբայլ եւ օնլայն բանկինգի համակարգերով:

Բանկն ունի երկրում ամենալայն մասնաճյուղային ցանցը, ինչպես նաեւ ներկայացուցչություն Փարիզում:

«Արդշինբանկը» Հայաստանի միակ ընկերությունն է, որն ունի աշխարհի երեք առաջատար՝ Standard & Poor's (BB- (Stable)), Moody's (Ba3 (Stable)) եւ Fitch (BB- (Stable)) վարկանիշային ընկերությունների կողմից շնորհված վարկանիշեր: Բանկն ունի Հայաստանի Հանրապետության վարկանիշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշն է:

Converse Mobile

Գ.

# ՆՈՐ C360 Matrix ՓԱԹԵԹ՝ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ

**Converse Mobile հավելվածում հասանելի է նոր՝ C360 Matrix փաթեթը, որը բաժանորդագրությամբ բանկինգին ծանոթանալու, այն փորձարկելու հիանալի հնարավորություն է:**

Սա փաթեթ է՝ նախատեսված թվային կենսակերպը նախընտրողների համար. ֆինանսների կառավարում թվային տիրույթում, թվային քարտեր, նաեւ միջազգային գործարքների, արտերկրում առցանց գնումների հնարավորություն առավելագույնս անվտանգ միջավայրում եւ քարտով:

Matrix-ն անվճար է. բաժանորդագրավճար, դրա շրջանակում քարտերի ու հաշիվների բացման, սպասարկման վճար նախատեսված չէ:

Այն կարելի է ակտիվացնել բացառապես «Կոնվերս» բանկի մոբայլ հավելվածում եւ ստանալ.

- 4-ական հաշվարկային եւ կուտակային հաշիվ՝ 4 հիմնական արժույթներով,
- վիրտուալ քարտ, այդ թվում՝ միջազգային գործարքների, առցանց գնումների համար:

Matrix-ը համապարփակ՝ 360 աստիճան բանկինգին ծանոթանալու եւ ֆինանսական փորձառություն կերտելու հիանալի հնարավորություն է:

Սակայն «Կոնվերս» բանկի միակ առաջարկը չէ: Եթե ցանկանում եք ավելի ընդգրկուն ծառայություններ ու հատուկ առաջարկներ, ապա կարող եք բարձրացնել փաթեթի դասը հենց մոբայլ հավելվածում:

Դրա համար հավելվածում մուտք գործեք «Անձնական էջ», «C360», ապա սեղմեք «Դասի բարձրացում» կոճակը:

Այս պահին հավելվածում հասանելի են C360 Neo Light, Neo, Ultra, ինչպես նաեւ պրեմիում սեգմենտի համար նախատեսված C360 Elite, Signature, Synergy փաթեթները: Դրանց շրջանակում «Կոնվերս» բանկն իր հաճախորդներին է առաջարկում.

- Վճարային քարտեր, կուտակային եւ հաշվարկային հաշիվներ՝ մի քանի արժույթով,
- Վարկային սահմանաչափ,
- «Կոնվերս» բանկի եւ ԱրՔա համակարգի բանկերի բանկոմատներում անվճար կանխիկացման հնարավորություն,
- sms-ների, տեղեկանքների, քաղվածքների ստացման հնարավորություն՝ առանց հավելյալ սակագնի կիրառման:

Քարտատեսակը, վարկային սահմանաչափի ու անվճար կանխիկացման առավելագույն շեմը կախված է փաթեթի տեսակից: Պրեմիում փաթեթների շրջանակում հաճախորդները կարող են օգտվել նաեւ ճամփորդական մի շարք արտոնություններից, այդ թվում՝ ճամփորդական ապահովագրությունից, Fast Track ծառայությունից, օդանավակայանների բարձրակարգ սպասարկման սրահներից օգտվելու հնարավորությունից, Concierge ծառայությունից եւ այլն: Այլ մանրամասների համար զանգահարել 010 511 522:

*● Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 41 պատահար, 3 մարդ մահացել է, 49-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

# «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ». 20 ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍ

Սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկը (BSTDB) եւ «Հայէկոնոմբանկ»-ը ս.թ. հուլիսի 10-ին ստորագրել են նոր համաձայնագիր, որի շրջանակում բանկը կստանա 20 մլն ԱՄՆ դոլարի չափով ֆինանսական ռեսուրս:

Տրամադրվող միջոցները «Հայէկոնոմբանկ»-ի միջոցով կուղղվեն Հայաստանում ՓՄՁ-ների զարգացմանը՝ վերջիններիս առեւտրային հնարավորությունների ընդլայնմանը, մրցունակության բարձրացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, ինչպես նաեւ տարածաշրջանային առեւտրի խթանմանը:

Համաձայնագիրը կնքվել է BSTDB-ի կողմից կազմակերպված «Խթանելով տարածաշրջանային առաջընթացը» խորագրով բիզնես ֆորումի ընթացքում:

BSTDB նախագահ Սերհատ Քյոքսալը նշել է. «Մեր համագործակցությունը «Հայէկոնոմբանկ»-ի հետ հիմնված է երկարաժամկետ եւ վստահելի գործընկերության վրա: Տարիների ընթացքում BSTDB-ի աջակցությամբ հարյուրավոր ՓՄՁ-ներ կարողացել են ստանալ կայուն զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ: Այս վարկային ծրագիրը հերթական քայլն է տարածաշրջանային ինտեգրման եւ Հայաստանի տնտեսության ամրապնդման ուղղությամբ»:

«Հայէկոնոմբանկ»-ի Վարչության նախագահ Արտակ Առաքելյանն իր հերթին ընդգծեց. «Մենք բարձր ենք գնահատում BSTDB-ի հետ մեր երկարամյա արդյունավետ համագործակցությունը, որն սկիզբ է առել դեռեւս 2007 թվականին: Այս ընթացքում մի շարք համատեղ նախագծեր են հաջողությամբ իրագործվել միջազգային ֆինանսական կառույցների հետ: Նոր վարկային ծրագիրը հնարավորություն կտա շարունակել աջակցությունը ՓՄՁ ոլորտին՝ապահովելով մրցունակ եւ կայուն ֆինանսավորում մեր հաճախորդների համար»:

Երկարամյա համագործակցության ընթացքում «Հայէկոնոմբանկ»-ը եւ BSTDB-ն ստորագրել են չորս հիմնական վարկային համաձայնագրեր՝ ընդհանուր 40 միլիոն ԱՄՆ դոլարի չափով:

Այս նախաձեռնությունը հերթական վկայությունն է միջազգային գործընկերության կարեւորության մասին, որով խթանվում է երկրի տնտեսական զարգացումը եւ կայուն աճը:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Ես՝ Արթուր Վագիֆի Աբրահամյանս, 2009-2017 թթ. սովորել եւ ավարտել եմ ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի՝ «հողաշինարարություն եւ հողային կադաստր» բաժնի բակալավրիատը: 2023 թվականին՝ տեղահանության ընթացքում, կորցրել եմ դիպլոմս:

Կից ներկայացնում եմ դիպլոմի սերիան՝AB 220615, գրանցման համարը՝39:

Դիպլոմը տրվել է 13.03.2017 թվականին:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (1)

Գ.

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ) իրականացնելու է «Բանիս» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը՝ դասական եղանակով.

- ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Բաղաբերդ թաղամաս, 29Ա հասցեում գտնվող 350,2 քմ շինություն եւ 3300 քմ հողամաս: Մեկնարկային գինը՝40000000 ՀՀ դրամ:

Աճուրդի առաջին փուլը՝ 31.07.2025թ.-ին, ժ. 14:00-ին, Սյունիքի մարզ, ք. Կապան, Ստեփանյան փողոց, 12 հասցեում, այնուհետեւ՝ հերթական փուլերը յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օր՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, 15:00-ին: Աճուրդի ավարտը՝30.09.2025թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է ընթացիկ մեկնարկային գնի 3%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետն է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվանը նախորդող առնվազն 2-րդ օրը՝ ժամը 16:00: Նախավճարը վճարվում է Կազմակերպչի բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ Կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ գույքի աճուրդի ավարտին նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել գույքի վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտին՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am կայք:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (2)

Գ.

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ) իրականացնելու է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը՝ դասական եղանակով, որպես մեկ միասնական միավոր.

- Լոռու մարզ, ք. Սպիտակ, Շահումյան փողոց, 1 հասցեում գտնվող 9766,20 քմ արտադրամաս եւ 12800 քմ հողամաս: Մեկնարկային գինը՝ 50000000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, ք. Սպիտակ, Շահումյան 1 հասցեում գտնվող 4139,50 քմ արտադրամաս եւ 5800 քմ հողամաս: Մեկնարկային գինը՝ 50000000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, ք. Սպիտակ, Շահումյան 1/ա հասցեում գտնվող 689,60 քմ վարչական շենք, 130մ պարիսպ եւ 6330 քմ հողամաս: Մեկնարկային գինը՝50000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 01.08.2025թ.-ին, ժ.14:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.09.2025թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է ընթացիկ մեկնարկային գնի 3%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետն է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվանը նախորդող առնվազն 2-րդ օրը՝ ժամը 16:00: Նախավճարը վճարվում է Կազմակերպչի բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ Կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ գույքի աճուրդի ավարտին նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել գույքի վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտին՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am կայք:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (3)

Գ.

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ) իրականացնելու է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը՝ դասական եղանակով, որպես մեկ միասնական միավոր.

- ք. Երեւան, Արաբկիր, Ղափանցյան փողոց, 95/3 հասցեում գտնվող 1678,71 քմ հողամաս: Մեկնարկային գինը՝175000000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Արաբկիր, Ղափանցյան փողոց, 95/4 հասցեում գտնվող 1678,71 քմ հողամաս: Մեկնարկային գինը՝175000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 28.08.2025թ.-ին, ժ.12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.09.2025թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է ընթացիկ մեկնարկային գնի 3%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետն է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվանը նախորդող առնվազն 2-րդ օրը՝ ժամը 16:00: Նախավճարը վճարվում է Կազմակերպչի բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ Կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ գույքի աճուրդի ավարտին նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել գույքի վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտին՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am կայք:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Գ.

Ես՝ Ալինա Դանիելյանս՝ (Կաֆյան) 2004-2008 թթ. սովորել եւ ավարտել եմ Երեւանի Մենեջմենթի համալսարանը «լրագրություն» մասնագիտությամբ, սակայն կորցրել եմ մասնագիտությունս հավաստող դիպլոմը հասարակական տրանսպորտում: Դիպլոմի սերիա՝ AB N 369912, գրանցման համար՝ 2347:

Դիպլոմը տրվել է 20.05.2025-ին:

●*«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

«ԻԴՐԱՄ» Գ

# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ Alipay+-Ի ՀԵՏ

**Համաշխարհային զբոսաշրջիկներն այժմ կարող են կատարել արագ եւ անվտանգ QR-վճարումներ Հայաստանում «Իդրամ QR» ենթակառուցվածքի միջոցով՝ օգտագործելով Alipay+ հավելվածը, ինչն իր հերթին թույլ կտա հայաստանյան առեւտրային կետերի ավելի քան 85%-ին ընդունել վճարումներ նաեւ զբոսաշրջիկներից:**




- Թողարկման պահին 13 հայտնի թվային դրամապանակների օգտատերեր կկարողանան կատարել անհպում QR-վճարումներ, իսկ ապագայում աշխարհագրությունը կընդլայնվի՝ ընդգրկելով Alipay+-ի գործընկեր այլ դրամապանակներ եւ բանկային հավելվածներ:
- «Իդրամի» եւ Alipay+-ի ռազմավարական համագործակցությունը կդիրքավորի Հայաստանը գլոբալ թվային վճարային էկոհամակարգում՝ կապելով տեղական բիզնեսը միջազգային զբոսաշրջիկների հետ:

Հայաստանի առաջատար թվային վճարային հարթակ «Իդրամը» հայտարարում է աշխարհի խոշորագույն թվային դրամապանակների ցանց, Ant International ընկերության կողմից կառավարվող AliPay+-ի հետ համագործակցության մասին: Այս համագործակցությամբ Alipay+-ի օգտատերերին հնարավորություն է ընձեռվում Հայաստանում իրականացնել միջսահմանային QR-վճարումներ «Իդրամ QR» ենթակառուցվածքի միջոցով: Սա Alipay+-ի առաջին մուտքն է Կովկասի տարածաշրջան, ինչը զգալիորեն ուժեղացնում է Հայաստանի թվային վճարային ենթակառուցվածքը եւ բարձրացնում երկրի վճարային պատրաստվածությունը համաշխարհային զբոսաշրջության համար:

Այս ինտեգրման շնորհիվ Alipay+-ի օգտատերերը կկարողանան հեշտությամբ սքանավորել «Իդրամի» QR-կոդերը՝ Հայաստանի հազարավոր վաճառակետերում կատարել իրենց նախընտրած դրամապանակով վճարումներ՝ միաժամանակ օգտվելով տեղական առաջարկներից եւ լոյալության ծրագրերից:

«Այս գործընկերությունը վկայում է «Իդրամի» նորարարության եւ միջազգային համագործակցության հանդեպ հանձնառության մասին», - ասաց «Իդրամի» տնօրեն Արսեն Քդեևյանը: «Alipay+-ի համար բացելով մեր QR ենթակառուցվածքը՝ մենք ոչ միայն ընդունում ենք միջազգային վճարումների ապագան, այլեւ ստեղծում ենք հյուրընկալ եւ հարմարավետ միջավայր միլիոնավոր գլոբալ օգտատերերի համար, որոնք առնչվելու են հայկական բիզնեսների հետ»:

Առաջիկա ամիսներին AliPay+-ի օգտատերերի համար փուլ առ փուլ հասանելի կդառնա «Իդրամի» գործընկեր վաճառակետերի ամբողջ ցանցը, այն է՝ 25.000 վաճառակետ, որոնք ընդգրկում են սուպերմարկետներ, զբոսաշրջային հայտնի կետեր, հյուրանոցներ, ռեստորաններ եւ այլն: Ժամանակի ընթացքում կընդլայնվի նաեւ Alipay+-ի գործընկեր դրամապանակների եւ բանկային հավելվածների ցանկը՝ ավելացնելով միջազգային այցելուների հարմարավետությունը: Միջազգային օգտատերերի համար վաճառակետում կտեղադրվեն բրենդավորված պիտակներ, որոնք կհուշեն, որ վաճառակետում կարելի է վճարել AliPay+-ով:

Արսեն Քդեևյանն ընդգծեց, որ գործընկերության շրջանակում «Իդրամը» շարունակելու է համագործակցել Alipay+-ի հետ՝ բացելու հնարավորություններ Idram&IDBank հավելվածի օգտատերերի համար՝ վճարումներ կատարելու Alipay+-ի ցանցում:

Alipay+-ով հնարավոր է կատարել վճարումներ աշխարհի 70 երկրներում եւ տարածաշրջաններում 100 միլիոն առեւտրային կազմակերպություններում՝ սպասարկելով աշխարհի շուրջ 1.7 միլիարդ օգտատերերի:

Այս համագործակցությունը Հայաստանը դիրքավորում է հզոր գլոբալ թվային վճարային էկոհամակարգում՝ կապելով տեղական բիզնեսները միջազգային զբոսաշրջիկների հետ եւ օգնելով տեղական բիզնեսներին ապահովել միջսահմանային ներառական աճ:

Alipay+-ի Եվրոպայի, Մերձավոր Արեւելքի եւ Աֆրիկայի տարածաշրջանի գլխավոր տնօրեն Պիետրո Կանդելան նշեց. «Մենք ուրախ ենք համագործակցել «Իդրամի» հետ՝ մեկնարկելու Alipay+-ով վճարումները Հայաստանում եւ բարելավելու զբոսաշրջիկների փորձառությունը: Այսուհետեւ Alipay+-ի միջոցով Հայաստանի ցանկացած չափի բիզնես կարող է օգտվել թվայնացման ներառական հնարավորություններից՝ բացելով գլոբալ զբոսաշրջության տնտեսական օգուտները այս սիրված ուղղության համար»:

***«Իդրամ»-ի մասին***

«Իդրամը» Հայաստանի առաջատար թվային ֆինանսական հարթակն է, որն առաջարկում է ամբողջական ծառայություններ՝ներառյալ էլեկտրոնային դրամապանակ, QR վճարումներ, դրամական փոխանցումներ եւ այլ ֆինանսական գործիքներ անհատների եւ բիզնեսների համար: «Իդրամը» հիմնադրվել է 2004 թվականին:

***Alipay+-ի մասին***

Ant International-ի կողմից կառավարվող Alipay+-ը միջսահմանային բջջային վճարումների եւ թվայնացման լուծումների հարթակ է: Այն կապում է համաշխարհային վաճառակետերը տարբեր բջջային դրամապանակների եւ թվային բանկային հավելվածների հետ՝ ապահովելով անխափան գործարքներ, տեղայնացված առաջարկներ եւ բիզնեսների համար հաճախորդների ներգրավվածություն ամբողջ աշխարհում:

«Իդրամը» վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՄԵՍԻՆ ԿԱՐՈՂ Է ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ԲԱՐՍԵԼՈՆԱ

Անհավանական եւ սպասված իրադարձության ականատես կարող են դառնալ «Բարսելոնա»-ի եւ հատկապես Լիոնել Մեսիի խաղի երկրպագուները: Կատալոնական ակումբի լեգենդը կարճ ժամանակով կարող է վերադառնալ հարազատ թիմ, որում անցկացրել է լավագույն տարիները:

Իսպանական El Nacional հանդեսը հայտնում է, որ այդ իրադարձությունը կարող է տեղի ունենալ նրա ներկայիս ակումբի՝ «Ինտեր Մայամի»-ի հետ պայմանագրում ներառված հատուկ կետի շնորհիվ: Այն ուժի մեջ կմտնի, երբ Մեսին նոր պայմանագիր ստորագրի Ֆլորիդայի ակումբի հետ: Գործող պայմանագրի ժամկետը լրանում է այս տարվա դեկտեմբերին, սակայն, լրատվամիջոցի տեղեկություններով, Մեսին այն կերկարաձգի մինչեւ 2026 թվականի ձմեռվա սկիզբը: Պայմանագրի կետերից մեկի համաձայն՝ թիմի խաղացողը կարող է ԱՄՆ առաջնությունում հայտարարված ընդմիջման ընթացքում վարձավճարով տեղափոխվել այլ ակումբ: Ամերիկյան լիգայում ընդմիջում է լինում նոյեմբերից մարտ ընկած ժամանակահատվածում, որի ընթացքում էլ Մեսին կարող է միանալ «Բարսելոնա»-ին: Նա հենց «կապտանռնագույնների» կազմում է ցանկանում անցկացնել հրաժեշտի խաղը: «Մատչ Թիվի»-ի աղբյուրները հայտնել են, որ «Բարսելոնա»-ն հատուկ է պատրաստվում Մեսիի հրաժեշտի խաղին, որը նախատեսվում է կազմակերպել «Կամպ Նոու» մարզադաշտի վերակառուցումն ավարտելուց հետո: Նշվում է, որ կատալոնական ակումբն արդեն ստացել է Մեսիի համաձայնությունը:

Լիոնել Մեսին «Բարսելոն»-ում հանդես է եկել 2003-21 թվականներին եւ 474 գոլ է խփել անցկացրած 520 խաղերում՝ նվաճելով ակումբային ֆուտբոլի բոլոր հնարավոր մրցանակները:

## «ՆՈԱ» «ԲՈՒԴՈՒՉՆՈՍՏ» ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ԱՅՍՕՐ

Հայաստանի գործող չեմպիոն եւ գավաթակիր «Նոան» երեկ՝ հուլիսի 14-ին, մեկնել է Չեռնոգորիա: Այս մասին հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը:

Սանդրո Պերկովիչի գլխավորած թիմը այսօր՝ հուլիսի 15-ին, Չեմպիոնների լիգայի խաղարկության որակավորման առաջին փուլի պատասխան խաղում կհյուրընկալվի «Բուդուչնոստին»:

«Բուդուչնոստ» - «Նոա» պատասխան հանդիպումը կկայանա այսօր՝ հուլիսի 15-ին՝ Երեւանի ժամանակով 23:00-ին:

Թիմերի միջեւ կայացած առաջին խաղն ավարտվել է երեւանյան ակումբի նվազագույն հաշվով հաղթանակով:

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆ» 2025

# «ԱՆՈՐԱ»-Ի ԱՍՏՂԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**Հեղինակային կինոյի վարպետ Շոն Բեյքերի՝ «Օսկար»-ի եւ «Ոսկե արմավենու ճյուղ»-ի արժանացած «Անորա» ֆիլմի դերասաններ Վաչե Թովմասյանն ու Կարեն Կարագուլյանը ներկա էին «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի բացման հանդիսավոր արարողությանը, որը տեղի ունեցավ հուլիսի 13-ին՝ Կինոյի տանը:**

Նրանք նշեցին, որ մեծ ուրախությամբ են մասնակցում նման բարձրակարգ փառատոնին: «Սա հրաշալի փառատոն է: Շատ փառատոների ենք մասնակցել, բայց իմ սրտում «Ոսկե ծիրան»-ը յուրահատուկ տեղ ունի, ասես վերադառնաս տուն», - ասաց Վաչե Թովմասյանը: Խոսելով «Անորա»-ից՝ նա համեստաբար նշեց, որ ոչ թե իրենք, այլ հենց ֆիլմն է արժանացել «Օսկար»-ի, եւ իրենք պարզապես եղել են արարողության մասնակից: Նա նաեւ ընդգծեց, որ «Անորա»-ն ավելի քան 120 մրցանակ է ստացել, իսկ «Ոսկե ծիրան»-ը կազմակերպված է շատ բարձր մակարդակով: Կարեն Կարագուլյանը, որն այս տարի փառատոնի ժյուրիի անդամներից է, հիշեց, որ ֆիլմի նկարահանումների ժամանակ քննարկել են՝ հնարավո՞ր է մի օր ներկայացնել այն հենց «Ոսկե ծիրան»-ին: «Կարենը վստահ էր, իսկ ես կասկածում էի: Հիմա շատ ոգեւորված ենք եւ ուրախ», - ասաց նա: Կարագուլյանը Հայաստան էր եկել յոթ տարվա դադարից հետո: Թովմասյանը, ով արդեն չորս տարի բնակվում է ԱՄՆ-ում, Հայաստան է գալիս տարին երկու անգամ: «Մշտապես դրական փոփոխություններ եմ նկատում, ամեն ինչ ավելի լավն է դառնում», - ընդգծեց նա: Դերասանները փակագծերը չբացեցին սպասվող նոր նախագծերի վերաբերյալ, սակայն խոստովանեցին՝ մեծ ցանկություն ունեն աշխատելու Հայաստանում: «Անորա»-ն ցուցադրվելու է փառատոնի շրջանակում, ինչպես նաեւ նախատեսվում է քննարկում Թովմասյանի եւ Կարագուլյանի մասնակցությամբ:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Հուլիսի 19-ին՝ 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կբեմադրվի «Տիկնայք եւ պարոնայք» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3000, 4000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Որո՞նք են խնամատարության սահմանված ժամկետները:**

*Սոնա Մինասյան (35 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Խնամատարությունը կարող է լինել կարճաժամկետ եւ երկարաժամկետ մինչեւ երեխայի չափահաս դառնալը:

Կարճաժամկետ խնամատարությունը կիրառվում է մինչեւ մեկ ամիս ժամկետով, անհրաժեշտության դեպքում՝ եւս մեկ ամիս երկարաձգելու հնարավորությամբ, եթե սույն օրենսգրքով առավել սեղմ ժամկետ նախատեսված չէ: Կարճաժամկետ խնամատարության ժամկետի ավարտից հետո, եթե հնարավոր չէ երեխային վերադարձնել կենսաբանական կամ խնամակալի ընտանիք, իսկ խնամատար ընտանիքը պատրաստ է շարունակել երեխայի խնամքը եւ դաստիարակությունը, ապա նախապատվությունը տրվում է նույն ընտանիքում խնամատարության ժամկետը երկարաձգելուն:

Երկարաժամկետ խնամատարությունը կիրառվում է մեկ տարի եւ ավելի ժամկետով: Երկարաժամկետ խնամատարության պայմանագրի երկարաձգում թույլատրվում է, եթե երեխայի վերադարձն ընտանիք կամ երեխայի որդեգրումը կամ խնամակալությունը (հոգաբարձությունը) հնարավոր չէ:

*ՀՀ աշխատանքի*
*եւ սոցիալական հարցերի նախարարության*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Աշխատակազմը երեք աշխատանքային օրվա ընթացքում կազմում է ընտրված երեխայի խնամքը խնամատար ընտանիքում կազմակերպելու մասին դրական եզրակացություն՝ ելնելով երեխայի լավագույն շահերից: Խնամատար ընտանիքում երեխայի խնամքը կազմակերպելու մասին եզրակացությունը կազմելուց հետո աշխատակազմը՝

1) մեկ աշխատանքային օրվա ժամկետում այդ եզրակացության վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրում է տեղեկատվական համակարգ, որը մուտքագրելու պահից առցանց դիտման իրավասությամբ հասանելի է լիազորված պետական մարմնին,

2) երեք աշխատանքային օրվա ժամկետում այդ եզրակացության մեկական օրինակներն առձեռն կամ փոստային կապի միջոցով՝ պատվիրված նամակով, տրամադրում է խնամատար ծնող դառնալ ցանկացող անձին եւ երեխայի բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմնին:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ի՞նչ ժամկետում պետք է ճանաչվի կենսաթոշակը:**

*Սուսաննա Մկրտչյան (65 տարեկան)*




**ՊԱՏԱՍԽԱՆ.** Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը, դիմումն ընդունելուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները, կայացնում է հետեւյալ որոշումներից մեկը՝

1. նշանակել կենսաթոշակ,
2. նշանակել կենսաթոշակ եւ տեղեկացնել կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին,
3. մերժել կենսաթոշակ նշանակելը:

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը:

*ՀՀ աշխատանքի*
*եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 63 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ: Սույն մասով սահմանված 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժում սույն օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ժամանակահատվածները չեն հաշվառվում:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*




Քաղաքում կարծես մարքեթինգային նոր մեթոդ է տարածվել:

Պաշտոնական բացմանը սպասող տարբեր կենտրոններ նմանատիպ պաստառներով են անցորդների/այցելուների ուշադրությունը գրավում:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել


2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ________________
Ազգանուն՝ ________________
Առաքման հասցե՝ ________________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ________________

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| Մարզ | Ջերմաստիճան |
|---|---|
| Շիրակ | +12 + 15<br>+25 + 29 |
| Կոտայքի լեռներ | +11 + 15<br>+25 + 28 |
| Կոտայքի նախալեռներ | +19 + 23<br>+32 + 34 |
| Գեղարքունիք | +12 + 16<br>+23 + 27 |
| Լոռի | +13 + 17<br>+27 + 30 |
| Տավուշ | +16 + 18<br>+29 + 32 |
| Արագածոտնի լեռներ | +12 + 14<br>+24 + 27 |
| Արագածոտնի նախալեռներ | +19 + 23<br>+33+ 36 |

| Մարզ | Ջերմաստիճան |
|---|---|
| Արարատ | +19 + 23<br>+34 + 37 |
| Արմավիր | +20 + 23<br>+34 + 37 |
| Վայոց ձորի լեռներ | +11 + 14<br>+24 + 28 |
| Վայոց ձորի նախալեռներ | +19 + 23<br>+34+ 37 |
| Սյունիքի հովիտներ | +18+ 23<br>+34 + 38 |
| Սյունիքի նախալեռներ | +14 + 17<br>+26 + 31 |
| ԼՂՀ | +18 + 22<br>+33 + 37 |
| Երեւան | +22+ 25<br>+36 + 38 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.7.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*